



ՎԱՐՐ

ՀԱՆԴԻՍ ՄԵՍՐՈՎՊԵԱՆ

Հրատարակի ամեն ամսու մէկին :
Ստորագրութեան տեղերն են :
Ղալաթա Յ. Միւհէնիական տպարանը :
Օմիւռնիա Թանգարան Վաստուրական Ընկերութեան :
Միջագիւղ վերձեւութեան Թանգարանը :

Տարեկան գինն է կանխիկ 60 դրութեւ :
Վեցամեայ " " 35 " "
Դուրս երթալից հանդէսներու ծամբու ծախքը տաճարին
վրայ է :
Ստորագրութիւն երբ առաջին թիւէն կ'սկսին

1 ԱՊՐԻԼ

Ը. ՏԱՐԻ 1862

ԹԻԻ 10

Ը.Օ.Գ.Ը.Յ.Ի.Ն

ՍՈՒՐԲ ԵՐՈՒՍԱԼԵՄԻ ՎԲԱՅ ԴԻՏՈՂԱՌԹԻՒՆ ՄԻ

Ներկային բարիքը և աղաղային յոյսը մոռցնել հուսան անցելոյն մէջ զգացած չարիքն ու ցաւը, ըսած է Իմաստասէր մի, և արդարեւ այնպէս է, վասն զի ահա երբ մեր ալ տարիէ մի 'ի վեր Ս. Երուսաղէմի Սրբոց Յակովբեանց վանուց ցաւալի ու անկարգ ընթացքը դիտելով մեծապէս 'ի խոր խոցուած էին սրտերնիս, այսօր կը մեղմանայ վիշտերնիս տեսնելով զի Նա իր քայլերը դէպ 'ի գիտութեան գեղեցիկ ասպարէզը կ'ուղղէ, ... այս Սրբաւայրս'որ իր առաջնորդաց անկարգ կառավարութեամբն ունէր բամբասանաց տեղի տուած էր, և օր ըստ օրէ տգիտութեան անյատակ անդունդին եղերքը կը պատէր աչքերը դոցած, դուհութիւն Լստուծոյ և փառք Սահմանադրութեան, որոյ միջնորդութեամբ քանի մի աղաւթս'որ ու աղատամիտ անձանց հրապարակախօսութեամբ զբաց նորա հոգեգութեամբ Սուրբ Սիմեոնութիւնը զի իրօք քիչ օրէն այն անդունդին յատակը պիտի խորասուղի, եթէ քիչ մի ևս անհոգութիւնը ձեռքէ չթողու,

փութաց ըստ կարի այս չարեաց դէմը առնելու և յաջողեցաւ : Սուրբ վանուցը մէջ ուսմանց մարմանգ մի տնկելու և մշակելու համար խոհական դաստիարակ մի խնդրեց 'ի բարեխառութիւն իւր և 'ի բարեկարգութիւն սուրբ տեղեաց որոյ վերայ Լղգին կողմանէ վերահացու դրուած են զայն 'ի բարեկարգութեան պահելու : Գտաւ այն այնպիսի անձ մի որոյ խոհականութեան և ուսումնականութեան վերայ ոչ ոք կը տարակուսի, այս խոհական Ընձը լուսահոգի Տ. Յովհան մեծ վարժապետին թոռը և Տ. Սարգսր Վանանդեցւոյ քաջաժառանգ որդին Յովհաննէս պատուելին է, որոյ երախտիքը մեծապէս վայելած է Օմիւռնիա և միշտ ինքզինքը նոցա երախտապարտ կը ճանչնայ, և չէմք սխալիք եթէ ըսեմք, թող չտարակուսի հոգեգութեամբ սուրբ Սիմեոն և համօրէն Լղգը, զի այս բարենախանձ Դաստառուն միջնորդութեամբ մեծամեծ բարիքներ պիտի վայելէ սուրբ վանքը, ինչպէս հինգ տարիի չափ վայելէց Միջագիւղի Սրբոց Թարգմանչաց Վարժարան, յորում և մեր բաղդաւորեցանք նմա աշակերտելու երջանկութիւնն ունենալ և մեր խոսանացեալ միտքեր մշակելու :

Մեծ եղաւ արդարեւ մեր սրտից խնդու

Թիւնը ու ներկայիս բարիքը և ազգային գեղեցիկ յոյսերը փարատեցին մեր անցելուն մէջ զգացած ցաւը, երբ իմացանք զի շնորհիւ սոյն բարենախանձ Դասատուին՝ նորա որք չորս ամիս յառաջ ստորագրութիւն մի դնելու կը շուարէին, այսօր բանասիրական ու ազգային գեղեցիկ ճառեր կը գրեն, և օր ըստ օրէ յառաջագիմելու վերայ են, ու կը յուսամք զի այս Արքայադաս քիչ ատենէ Վ. Թեմեան տաճար մի տփախ դառնայ, ուսկից պիտի ելնեն ընտիր Հովիւներ Ս. Սուսաւորչայ փարախը ուղղափառ գաւանդութեան մարգագետիններու վերայ արածել և ամեն յարձակմանց գէժ պաշտպանել զայն, որով բոլորովն անհետանայ տփախ այն ցաւը զոր զգաց աղբը նորա ցարդ դառն կացութենը վերայ :

Աստի կը գովեմք հոգեգումար Սիաբանութեան այս բարի նպատակը, և չեմք ղանալ մեր խորին շնորհակալութիւն ՚ի դիմաց բոլոր անոնց որք սուրբ Վանուց բարեկարգութեանը կը ցանկան, մատուցանել մեծարգոյ Տնօրէն Դատաստուին, որ կը ջանայ որչափ կարելի է այնչափ շուտ ուսմամբք բարեգործել սուրբ Վանքը :

Թե և կուգէինք ընդարձակօրէն խօսիլ այս նիւթոյս վերայ, բայց աւելի գիպող ժամանակի պահելով ըսելընիս, այս անգամ միայն փետրվար 15 սրբոց Վարդանանց տօնախմբութեան օրը կատարուած փառաւոր հանդիսին համառօտ նկարագրութիւնը և մեծարգոյ Դասատուին կարգացած ճառը Սիւթեմեան ընդօրինակելով հոս կը դնեմք ՚ի խնդութիւն սիրելի ազգայնոց և ՚ի քաջալերութիւն սիրագումար Սիաբանութեան :

« Երուսաղէմէն եկած նամակները գոհացուցիչ լուրեր կը պարունակեն ուսման և բարեկարգութեան յառաջացման մասին : Սեծարգոյ և ուսումնական Պ. Յովհաննէս Սիրզա Վանանդեցին որ անօրէն և դասատու կարգոված է յիշեալ վանուց՝ մեծ խնամք և հոգ կը տանի զայն ուսումնականութեան և յառաջագիմելութեան մէջ զարդացնելու :

« Փետրուար 15 ին սրբոց Վարդանանց տօնախմբութեան օրը մեծ և փառաւոր հանդէս մի տեղի ունեցեր է եւամօեայ յոնապատրաստից բնութեամբ ՚ի պատիւ նոյն դիւցազանց, որոց նմանը դեռ չէ տեսնուած կը գրեն. հանդիսին ներկայ էին բոլոր ուխտաւորները, Սիաբանութիւնը և քաղաքին երեւելիները խուռն բազմութեամբ. հանդիսատեղին էր

Վախճանեալ Յովհաննէս պատրիարքի շինել տուած ընդարձակիր և փառաւոր ուսումնարանը, որ բաւական չքեղութեամբ զարդարուած էր, ճակատը ունեկալով որոյն Վարդանայ նկարուն պատուական պատկերը : Հանդէսը կը բացուի ազգային ընտիր և ներդաշնակաւոր երգերով, ըստ մեծի մասին առ սուրբ Վարդանեանս ուղղուած, որմէ ետքը կը կարգացուին հետզհետէ երեք ճառեր, որոց առաջինը կը փութանք հոս տպելու, և զոր կարգացած է մեծարգոյ Պ. Յովհաննէս Սիրզա Վանանդեցին : Այն օրինակ հանդէս մ'ալ տեղի ունեցեր է Վաղանդի օրը, ուր քսանի չափ ատենաբանութիւններ կարգացուեր են ՚ի մեծ գահաւանդութիւն հանդիսականաց : Երուսաղէմայ նախորդ լուրերը եթէ մեր սրտերը կը վշտացնէին քաղցր է մեզ յուսալ որ անոնց յաջորդները մեր սրտերը նորէն պիտի բերկրեցնեն, զորոնք հաջորդել մեր ազգայնոց կը խոստանանք երբեմնակի :

Եհաւասիկ մեծարգոյ Պ. Յովհաննէս Սիրզա Վանանդեցւոյն զրուցած ճառը զոր անփոփոխ կը տպենք :

« Սրբազան Հարք և ազգատէր Հանդիսականք :

« Երկնահանդէս է օրս և երկրազուարճ, հրեշտակք յերկինս և մարդիկ յերկրի ցնծալեալ բերկրին, և կարի իրաւամբ. զի քաջալալթ վկայից գերեքնանիկ սրբոց Վարդանանց պանծալի նահատակութեան շքեղ տօնախմբութիւն փառաւոր յիշատակն է այսօր, ո՛ր Հարք իմ Սրբազանք և Հանդիսականքդ Վեգատէրք, այն անզուգական քաջ նահատակաց որք հերբեցին վանեցին մոգական պիղծ աղանդոյ մառախուղը, և զՀայաստան ուղղափառ սուրբ հաւատոյս անսուրբ ճառագայթներով և ևս պայծառացուցին :

« Արեմն ուրախաւիթ է օրս երկնային զուարթնոց համար, մեծ և նշանաւոր բոլոր Հայոց համար, բայց մեծագոյն և վսեմապանծ ճշմարիտ հայրենասիրաց համար : Ո՛վ մեծի բարեգիւլութեան աւուրս՝ որ Հայրենեացս վիճակը կերպարանափոխ բրաւ, զի սանձահարկեցաւ խրոխտ թշնամեաց արձակերասան դազանամտութիւնը, քանդեցան հիմն ՚ի վեր կործանեցան դիւաբնակ ատրու շանները և նոցա մալրաշաւիղ պաշտօնեաները՝ հանդերձ փտարիւն դօրօք և դօրաւարօք փախստական վտարանդի եղան մեր Արդեմավայր բնադաւառէն, բերկրեցաւ Հայաստան իր հարաւ

դէսներով անխաբան կոտորել, ինչպէս և կը
կատարէ մայրս մեր սուրբ Եկեղեցի: Սրբոց
Վարդանանց անկէն բարեխօսութեան ապա-
ւինելով խնդրէ՛ք նաեւ բազկատարած և սրբ-
տաքուի մաղթանօք Մ'ստուծոյ, ներշնչել
մեր և ընդհանուր օրհնեալ աղբիւս սրտից մէջ
այն սուրբ սիրոյ սքանչելի միութեան հոգին՝
որովք միայն զօրացեալք արկացեալք քաջա-
յաղթ սուրբ Վարդանանք, գեր քան ըղ-
մարդկայինս բնութիւն գործեցին զարմանա-
լիս, և պատմութեանց մէջ այն մեծ ազդե-
ցութիւնը ստացան՝ զոր անհնարին է ժամա-
նակիս եղծել, և որ դարուց 'ի դարս անմա-
ռաց սիրտի մնաց և 'ի վերջոյ հոգեզուարճ
բերկրութեամբ բռնմբ բերանալիր, յիշատակ
մեծի պատկազարդ Հայրենասիրացոյ օրհնու-
թեամբ եղելի, այժմ և միշտ և յաւիտեանս
յաւիտենից:

1862 Փետրվար 15-17

Ի սուրբ Երուսաղէմ

Տնօրէն Դատաւոր
Յակոբ Ե. Ս. Սիւրբ Վանքեցի

ԱՅԸՆ ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ

ՏԵՍԱՐԱՆ Ժ

ՊԱՆԵՏ ԵՒ ԿԱՄԻՏԱՎ

ՊԱՐ. Սէի իշխ Հոսէ խեղճը գեռ խնայած
չէ կարծեմ:

ԿՈՄ. Ի՞նչու աղքատի ուրախ ես եղեր Պարեա:

ՊԱՐ. Ի՞նչ փրկատիւն չեմ կրնար ըսել եղեր
միայն ուրախալի լուր մի ունիմ քեզ հազար
դէրու եղեր:

ԿՈՄ. Ի՞նչ լուր է եղեր, ըսէ Պարեա:

ՊԱՐ. Խիստ չափազանց ուրախալի լուր, եւ
թէ ըսեմ. չեմ կրնար սխալմել թէ որչափ պիւ-
տի ուրախանաս եղեր:

ԿՈՄ. Ի՞նչ Պարեա չուտով ըսէ քեզ կը վար-
ձաորեմ:

ՊԱՐ. Այս յայտնեմ այս վերջին աստիճանն ու-
րախալի լուրը:

ԿՈՄ. Եւ ու ըրէ, չուտ չեմ կրնար համբե-
րել եղեր:

ՊԱՐ. Ի՛հա կ'սկսիմ. Վարդանայչ . . . ահ
չեմ գիտեր թէ պատմութեան օր կողմէն լու-
կոսիմ, և ինչպէս յայտնեմ քեզ. կուզեմ որ
բոլորը մէկէն իմանաս:

ԿՈՄ. Ի՞նչ եղեր Վարդանայչ, ըսէ:

ՊԱՐ. Ի՞նչպէս ըսեմ, Վարդանայչ . . . Վար-
դանայչ, շատ բաներ է եղեր . . . կը զարմա-

նամ թէ արդե՞ք որչափ ուրախալի լուր կըր-
նայ ըլլալ եղեր:

ԿՈՄ. Ի՛ի ճաթեցիներ զիս յայտնէ չուտով որ
իմանամ թէ Վարդանայչ ինչ է եղեր:

ՊԱՐ. Վարդանայչ ըսաւ թէ . . . բայց ու-
րախութեան կը շփոթեմ եղեր:

ԿՈՄ. Կողաչեմ Պարեա, ի՞նչ կայ զըսեցէ
այս որչափ երկար տեսց յայտնութիւնդ:

ՊԱՐ. Ըսաւ թէ . . . գնա ըսէ իմ կողմանէս
Կամիտասին որ . . . վերջապէս չ'օրհալի կտրե-
նամ յայտնել, շփոթեցայ:

ԿՈՄ. Կը խնդրեմ եղեր, կաղաչեմ եղեր ի՞նչ
ըսաւ եղեր:

ՊԱՐ. Ոչ ոչ անհնարին է մի ստիպեր զիս:

ԿՈՄ. Օքեղ աւելի ուղածիդ կը վարձաու-
րեմ:

ՊԱՐ. Վարձաորէ որ ըսեմ:

ԿՈՄ. Բեղ արժանի ըլլալու բան մի չ'կայ
հիմայ քովս:

ՊԱՐ. Ի՛նչ գտնէ ըսեմ. Վարդանայչ ըսաւ
թէ գնա ըսէ իմ կողմանէս Կամիտասին որ
զինքը տեսնելէս 'ի վեր անհնախստ եմ:

ԿՈՄ. Ի՞նչ համար ըսաւ Պարեա, ե՛հ չա-
րունակէ:

ՊԱՐ. Սէի անդամ տեսնելու չ'կրցայ կարօ-
տութիւնս առնուլ, երանի թէ իւր երեսը
չ'տեսնայի, ըսաւ հառաչանօք, զի խիստ նե-
ղութիւն կը պատճառէ ինձ:

ԿՈՄ. Ի՞նչ է եղեր ի՞նչու համար չուզեր ե-
րեսս նայիլ:

ՊԱՐ. Ոչ սխալ կը հասկնաս (Սէի իշխ) կարե
առաջ է:

ԿՈՄ. Ի՞նչ ըսիր Պարեա:

ՊԱՐ. Բո՛ւր կուզեմ, որ կարօտութեամբդ
կը նեղուի:

ԿՈՄ. Իրաւունք ունի, Պարեա, զի ես ալ
նոյն ցաւը կ'զգամ եղեր. բայց Պարեա, երբ
տեսնես զինքը ըսէ իմ կողմանէս որ ես ալ
կը տանջուիմ եղեր և պիտի աշխատիմ եղեր փա-
թանցներու հարսանիքը, Պարեա, միշտ զիս կը
հարցնէ, անուիւնս կ'ախորժի:

ՊԱՐ. Ի՞նչ կրես, պատերազան վերայ ան
գամ դէմքդ նկարուած է կրօն, և անուիւնդ
մեռնիս բերնէն չ'ձգեր. երբ անուիւնդ կը լը-
սէ խենթ մի կը դառնայ (Սէի իշխ) զգուշե՛ն:

ԿՈՄ. Իմատուութեանս և կրթութեանս պը-
տութեան եւ, զոր կը վայելեմ եղեր:

ՊԱՐ. Ի՞նչ ըսելէ, (Սէի իշխ) վնայ խեղճիդ
հիմայ կը տեսնես:

ԿՈՄ. Չե՛թէ Վարդանայչ, այլ ամենուի
սիրելի եմ ընտիր յատկութիւններովս:

ՊԱՐ. Ղաւարիտ է զի ես ալ անհուն սիրով

պիտի ելնէս, եթէ ոչ խստութեամբ զքեզ հանել կուտամ:

ԿՈՄ. Կիրակոս, սիրելի Կիրակոս, փոխէ դիտաւորութիւնդ, անո որչափ շահու ճամբաներ պիտի ցուցնեմ քեզ:

ԿԻՐ. Կորսուէ կըսեմ անէս. և անգամ միայն ուր չափի կոխէս հոս:

ԿՈՄ. Ենթամ միայն Վարդանայայ հարցուր թէ կրնայ բաժնուիլ ինձմէ:

ՊԱՐ. Իրաւունք, կուղէնք հարցնելու է:

ՎԱՐԴ. Բոլոր սրտանց կատեմ, ու կը բաժնուիմ քեզմէ, ինչ կը կարծէիր որ հօրս կամայք հնազանդութիւն ընելով սիրտս կապուած էր քեզի հետ քննութեամբ ու յաւիտեան մի երեւար, գոհ եմ:

ԿՈՄ. Ե՛հ Վարդանայ զու ալ կատես զիս. քո ատեւութիւնդ ամէնէն ծանր է ինձ եղբ:

ՊԱՐ. Ե՛հ երեւելի և աներևոյթ փիլիսոփայ ինձմէ ինչ պէս պիտի բաժնուիս:

ԿԻՐ. Ըլ բաւական է դուրս ելլ. . . .

ՊԱՐ. Ենթաւտ երեւելի մարգարէ հայրդ այս վերջին խայտառակութիւնդ ալ մարգարէապետ է եղբ:

ԿԻՐ. Եթէ Պարեոս սրկորսուի անպիտանը, դեռ կը կենան լիբը:

ԿՈՄ. Եւսոյ, որ չէք ճանաչեր յարգս ու պատիւս:

ԿԻՐ. Գուրս հանեցէք. կըսեմ սա աներեսը:

ՊԱՐ. (Հիշելէ մի քանի կէտ շարժելով) ալ բաւական է կորսուէ գնա մէկ ուրիշ մի գտնել ու նորա հետ ամուսնանալ. բայց չմոռնաս զիս ալ հարսանիք հրաւիրելու:

ՊԵՐՃ. Երևամ թէ զիս ալ չէք մոռնար պարոն իմաստակ (բռնի Դոն-Դոն ինչ Կանիէն):

ՏԵՍԱՐԱՆ ԺԲ

ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

ԿԻՐ. Հա՛ անօրէն լիբը, որչափ դժուարութեամբ արտաքսեցինք, իրաւունք ունիս եղեր Եռշան, յայտնուեցաւ իւր չարութիւնը, մանաւանդ իւր աներեսութիւնը, ահ որչափ դառն հետեանք պիտի ունենար եթէ նորա հետ ամուսնացնէի աղջկիս, սիրելի աղջկիս քո ըրած տրտուջն ալ արգարացի էր. բայց ես չկրցայ իմանալ միայրդ:

ԸՈՒՇ. Ըլ այսու հետեւ արժան չէ իմաստաւ կայ լով անունը. անգամ յիշել, կորսուեցաւ իւր խայտառակութեամբը, և ամէնուս բաղձանքը պէտք եղածին չափ պատկուեցաւ:

ԿԻՐ. Ուրեմն սիրելի աղջկիս, եթէ արժա-

նի որդի ես ինձ. նոր ամայսնոյդ ալ, որ քիչ մի ետքը հոս պիտի ըլլայ. խիստ կերպարանք մի ներկայացնէր, զի ինքը ազնուական ցեղէն է. և առանց զքեզ տեսնելու վեհանձնաբար շնորհեց այդ մատանին իբրեւ միութեան և սիրոյ առաջին նշան, ուստի նորա տարօրինակ վեհանձնութենէ, վճռէ նորա վարքն ու միւս հանգամանքներ, նա մանաւանդ ազնւականութիւնը:

ՎԱՐԴ. Ե՛հ հայր իմ սիրելի. ես հարազատ ու հնազանդ որդի եմ քեզ, քս որոշումն ինձ սիրելի և հաճելի է, բայց իմաստակին համար ըրած անխոհեմ ընդիմութեանս նորա շողքորդ և անտանելի կերպարանքէն պատճառեցաւ. և շփոթութիւնը մոռցնել տուաւ ինձ իմ ամէն որդիական պարտքերս, որոց մէջ երբէք պակաս չէի գտնուած:

ԿԻՐ. Կը ներեմ բոլորովին և իրաւունք ալ կուտամ ըրածիդ «Սիհրան կուղէմ որ դու ալ գոհութեամբ սրտի հնազանդիս ըրած առաջարկութեանս և համարձակ խոստովանիս եթէ մեր քաջ բժշկին սիրուն աղջկանը վերայ տրտուել մի ունիս»:

ՄԵՀ. (Ելնելէ երեսը նայելով) Ե՛հ տրտուել ինչ խօսք է ան հայր իմ, կամքդ կատարելու համար ամբողջ սիրտս կը նուիրեմ սիրուն և չքնաղ Աշխէնի և կը սիրեմ զինքը և ինքն ալ փոխադարձաբար նոյնը ընելուն կը բաղձամ:

ԳԱՐ. Ե՛հ, իմ աղջկիս ալ կը սիրէ զՍիհրան պատասխանէ աղջկիս:

ԱՇԽ. Ենթաւտ հայր իմ չափազանց և եւրապոսական սէր մի կարծարծի և կը բոլբոլի սըրտիս մէջ. կը սիրեմ զՍիհրան որպէս զի հօր մի հրամանը հնազանդիմ:

ԸՈՒՇ. Ե՛հ տէր Լոռմն ալ կուգայ, ինչ յարմարագոյն առիթ:

ՏԵՍԱՐԱՆ ՎԵՐՁԻՆ

ԱՏՈՄ ԵՒ ԱՌԱՋԻՆՆԵՐԸ

ԱՏՈՄ. (Սէլի կողմ) Օ՜ մայրելի տեսարան և ցանկալի միութիւն:

ԿԻՐ. Ուրախութեամբ սրտի կը շնորհաւորենք ձեր գալուստը և անկարող եմք յայտնել մեր սրտից անարատում ցընծութիւնը զքեզ ալ մեր միութեան մէջ ունենալով, ահաւա սիկ իմ աղջկիս և քո ընկերդ:

ՎԱՐԴ. (Սէլի կողմ) Ո՞վ բաղք տեսիլ, ո՞վ երջանկառիթ ժամ:

ԱՏՈՄ. Կը շուարիմ երախտապարտութիւնս ու շնորհակալութիւնս ինչ պէս յայտնելու

ՀԱՆԴԱՏՈՒԹԻՒՆ, ԶԲԱՄՄԱՆՔ, ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ :
 Աշխատե որ սիրադ հանդարտ պահես, հա-
 կառակութիւններէ ու գժտութիւններէ ըզ-
 դուշանաս, ու մղեկան կիրքերը սանձելով
 յողթէս կամ քաջութեամբ համբերես այն
 փորձութեան որք սովոր են պատահիլ մարդ-
 կան անգործութենէ փախչելով, փախիր նաեւ
 ձանձրութենէ, օգտաւէտ բաներու զբաղէ,
 Ատուծոյ պարգեւաց բարիքը շատ կամ քիչ
 խոհեմութեամբ ու գոհ սրտիւ վայելէ և այս
 ըսածներս կատարելով անտարակոյս եղեր որ
 երջանիկ կ'ըլլաս :

Այսինքն ապշեցաւ գեղջուկ մարդոյ մի
 բերնէն այնչափ իմաստալից խօսքեր լսելով,
 և մանաւանդ նորա վերջին խօսքերը մտքին
 մէջ խորունկ տպաւորութիւն մի ըրին. հրա-
 ժարական ողջներ տալով մեկնեցաւ անկէ,
 ու սկսաւ մտքին մէջ երկրորդել ծերունիին
 լսածներս : Ու որչափ որ կը խորհէր այնչափ
 ծերունոյն ըսածներուն իրաւունք կ'ուտար,
 կ'ըսէր ինքնիրեն : « Ստուգիւ փնտռած եր-
 ոջանութիւնս այս դաշտերուն մէջն է եւ
 ոչ զեր, որ իմ ծնած ու մեծնդ տաւած տե-
 ոջերս են, և ես ասոնցմէ հեռացեալ, պարապ
 ուեղեր կը փնտռեմ զայն, ա՛հ. շատ չարա-
 ոչ շուք պէտք է համարել այն գաղտնիքը զոր
 ոչ գտայ քարայրին մէջ և որով ինքզինքս բարե-
 ոչ բաղդ կը կարծեմ : Այլ այսու խտենային
 ոչ եթէ մտածեմ նորա համար ի՞նչ կրնամ ը-
 ոչ սել, մինչև ցարդ ի՞նչ օգուտ տեսայ այն
 ոչ դաղտնիքէն, անհամար ճամբորդութիւն
 ոչ ներէ յոգնած. ձանձրացած. ուրիշ բան չ'ը-
 ոչ կրցայ շահիլ, եթէ ոչ տեղեկացայ որ մարդ-
 ոչ կանց ամբարշտութիւններն միօրինակ են
 ոչ ամեն տեղ, նաեւ նոցա յիմարական անկար-
 ոչ դութիւնները : Անհամար զուարճութիւնք
 ոչ անողակացունցին զիս. որք վայրկեան մի ան-
 ոչ գամ կատարեալ ուրախութիւն չ'պատճա-
 ոչ ուեղէն զատ ընդ հակառակն շրմին դուռը
 ոչ հրուիրեցին մարդեալ քայլերս, ընդունայն
 ոչ փառասիրութենէ մի գրգռեալ ծանր հո-
 ոչ շերով, կերպ կերպ նեղութիւն ու վիշտ
 ոչ կ'ըրեցի, և ի վերջոյ խեղդուելու չուա-
 ոչ նով մի վարձատրուեցայ : Ահա՛ ինչ մի
 ոչ չարաչար խաբէութեանը մասնուէրով, որ
 ոչ առ երեստ սեր կը ցուցներ ինձ և որ այն-
 ոչ չափ քաղցր խօսքերով չղտնեց զիս ու սիր-
 ոչ տըս յոյսերով լեցուց. այժմ աստանդիկ կը
 ոչ չըմագայիմ ուր ըլլալս՝ չ'գիտնալով. մինչև
 ոչ անգամ ինքզինքէս զղուէր ու ձանձրացած
 ոչ եմ : Այրանի թէ այն դաշտերէն չ'հեռաց-
 ոչ նէի բնակութիւնս, ուր ծնած եմ. ու ե-

« րանի որ այն գեղջկային անմեղ կեանքը վա-
 « յեղէի մինչև ցարդ : Հոն կերած կերա-
 « կուրներս թէ և այնքան համարամ հանդեր-
 « ձանք եփուած չէին, բայց ասորման
 « միշտ բաց ըլլալով համեղ ու ասորմէն կու-
 « դային ինձ նոքա : Օգետներս պարզ և ան-
 « շուք էին, բայց որչափ լաւագոյն կը պահ-
 « պանէյին զիս եղանակոյ անբարեխառնու-
 « թեանը, քան թէ այն հագուստները, զոր
 « յետոյ նորածնութիւն յեղեղուկ հաճոյքո-
 « վն ստիպուեցայ շինելու : Աքատիկ էր
 « խրճիթս, բայց ես ինչպիսի քաղցրութեամբ
 « կը ննջէի հոն երկար ատեն, անհանգստու-
 « թիւններէ ու ձանձրանալի մտածմունքնէ-
 « լե հեռու. պահպանութեանն ու սրտիս
 « մշակութեանը կ'զբաղէի. բայց այս զբաղ-
 « մունքն որքան նախապատիւ է եղեր այն
 « անգործութենէն որ անմեկնելի կտորդ է
 « ձանձրութեան և որ շատ անգամ խոշտան-
 « գեց զիս : Ա՛հ. իրաւունք ունի այն պատ-
 « կառելի ծերունին զոր Ատուծոյ դէմն հա-
 « նեց իմ թիւը ընթացքս ուղղելու համար,
 « նա բարեխնամ Ատուծոյ ձայնն է որ վերս-
 « տին կը կոչէ զիս դէպ ի՞նչ այն ուղիղ ճամ-
 « բան, յորմէ մարտեցայ, ուրեմն պարտաւոր
 « եմ հեռանիլ նմա » :

Երդմանիք :

ԲԱՆՈՒՄԻՐ

Ի ԽՐԱՐՈՒՑ Ե ԶՆԿՈՅ

Որ գարուն ի հանգստեան կայ, ձմեռն
 ի սովոյ և ի սառնամանեայ սատակի :

Կեղծաւոր կրօնաւոր՝ պատրուակ է սա-
 տանայի, ընդ իւրեաւ ունեւով զատանայ՝
 զղաղութիւն անդամոյն ծածկէ, և նկարա-
 կերպ պատրուակովք պատրէ զտեսողն :

Կրօնաւոր մարմնասէր խողի նմանէ, ի
 ծովացեալ մեղայն հեղձնու :

Սոքա են գառնազգեստք՝ որոց սպառնա-
 ցաւ Յիսուս ընդ անհաւատան դասել :

ԽՍԲԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆՔ

ԹՈՎՄԱՍ Պ. ՊԵՌԵԱՆՅԱՆ

ՍԱՐԳԻՍ ԲԱՐՍԵԳԵԱՆ

Ի ՂԱԼԱԹԱ Կ. ՊՕԼՍՈՅ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԻԷԼԷՆՏԻՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ԵԿԵԼԵՑԻՈՅ ՓՈՂՈՅ՝ ԹԻՒ 17